



### ■ Հայ գերիները կարելի չէ փրկել Ատրպեյճանի բանտերէն

Հաւաստի ազրիւրներէ ստացուած տեղեկութիւններէ կ'իմանանք, որ Պաքուի բանտերէն մէկուն մէջ սպաննուած է Բերդաձորի պաշտպաններէն մէկը, ենթաշրջանի Մեծ Շէն զիւղի բնակիչ, երկու անշարահաս երեխաներու հայր Արվիդ Մանկասարեան: Այս տեղեկութիւնը ճշդելու եւ մեկնաբանելու համար մեր թղթակիցը զիմեց Հայաստանի հերոսոջն Խորհուրդի Արցախի հարցերու յանձնախումբի գլխավոր փորձագէտ Կարիսա Ալավերտեանին:—

— Կուրը ճշդելու համար մեր յանձնախումբի խնդրանքով Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ռազմագերիներու, պատանդներու եւ անյայտ կորսուածներու վարչութիւնը դիմեց Կարմիր հաչի միջազգային կազմակերպութեան հայկական բաժանմունքին, տեղեկացնելով՝ որ Արվիդ Մանկասարեանի ազգականները տեղեկացած են, որ իրենց ազգականը բանտին մէջ սպաննուած է: Կարմիր հաչի կազմակերպութեան հայկական բաժանմունքը հարցում քրած է, որու պատասխանը եղած է իրողութեան հաստատումը: Այլ մանրամասնութիւններ առայժմ յայտնի չեն: Սակայն միջազգային օրէնքով գոյութիւն ունի պարտադիր որոշում մը, որ անոր դիակը անպայման պէտք է յանձնուի հարազատներուն:

Ա. Մանկասարեան ձերբակալուած է 1991ի մայիս 15ին, տխրահոյակ «Օղակ» գործողութեան ժամանակ, երբ Բերդաձորի ենթաշրջանէն բոլոր գիւղերու բոլոր տղամարդիկը ձերբակալուեցան եւ բանտարկուեցան Շուշիի բանտին մէջ: Անոնցմէ մեծահասակները եւ անչափահաս տղաքը ազատ արձակուեցան, իսկ 20 հոգի դատապարտուեցան, որոնցմէ 5ը՝ մահապատիժի, անհիմն կերպով մեղադրուելով ատրպեյճանցի լրագրող Շալաքին Ասկերովայի եւ անոր ուղեկցող 3 անձերու սպանութեան յանցանքով:

Հնգեակի դատավարութեան մասնակցող պաշտպան փաստաբանները յետագային մեզի յայտնեցին, որ 1992ի ապրիլ 1ին կայացած դատավարութեան ժամանակ ընդհանրապէս գաղթած են իրաւական կանոնները եւ այդ օրէն սկսեալ ոչ ոք կրցած է տեսակցիլ մահապատիժի դատապարտուածներուն հետ: Մեր յանձնախումբը կրցած է կցկտուր լուրեր ստանալ անոնց վիճակին մասին, որոնք կը վկայեն, թէ ինչպիսի խոշտանգումներու եւ չարչարանքներու ենթարկուած են բերդաձորցի տղաքը Պաքուի բանտին մէջ: Մենք դիմեցինք բոլոր միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւններուն, ինչպիսիք են «Էմըրսփի Ինթըրնէշնըլ»ը, Կարմիր հաչի միջազգային կազմակերպութիւնը, Հելսինքիի մարդկային իրաւունքներու պաշտպանութեան կազմակերպութիւնը եւ ուրիշներ: Տեղեկ պահած եւ խնդրած ենք, որ անոնք սատար կանգնին Պաքուի բանտերուն մէջ գտնուող հայորդիներուն: «Էմըրսփի Ինթըրնէշնըլ»ը իր ներկայացուցիչը ուղարկեց Պաքու, յատուկ յանձնարարութեամբ, որպէսզի ան տեսակցի մահապատիժի դատապարտուածներուն հետ: Պաքուի մէջ անոր արգիլած են բանտ մտնել: Հակառակ այս բոլորին, «Էմըրսփի Ինթըրնէշնըլ»ը կ'աշխատի ապացուցել Ատրպեյճանի իշխանութիւններուն, որ այդ դատավիճակը սխալ է եւ պէտք չէ գործադրուի:

Ատկէ գատ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պատանդներու եւ ռազմագերիներու փոխանակութեան յանձնախումբը բազմիցս դիմած է Ատրպեյճանի նոյնանուն յանձնախումբին, բերդաձորցի տղաքը փոխանակելու համար: Վերջինս զանազան պատճառաբանութիւններով մերժած է այդ փոխանակութիւնը: Սեպտեմբերի սկիզբը լուրեր տարածուած են, որ տղոց կեանքին վտանգ կը սպառնայ: Իրողութիւնը հաստատուեցաւ, երբ սեպտեմբերի վերջաւորութեան բանտին մէջ մահացաւ Բերդաձորի 4-րդ հնագիտութեան ուսուցիչ, 4 անչափահաս երեխաներու հայր Առնո Մկրտչեան, որու դիակը Կարմիր հաչի միջազգային կազմակերպութեան շնորհիւ բանտէն դուրս բերուեցաւ: Ամբողջ ցարը այն է, որ երկու լուրերն ալ՝ Առնո Մկրտչեանի եւ Արվիդ Մանկասարեանի մասին, բաւական ուշացումով հասան մեզի, ինչ որ դարձեալ միջազգային կանոններու կոպիտ խախտում մըն է:

Վերջին 2 ամիսներուն Պաքուի բանտերէն դուրս բերուած են երկու այլ հայորդիներու դիակներ: Մէկը Արմէն Աւանէսեանի դիակն է: Ան ազերիներու կողմէ բռնուած էր Միլվոտիի մէջ եւ փոխադրուած Պաքուի բանտը, Թիֆլիս - Աղղամ հանրակառքի պայթեցման անհիմն ամբաստանութեամբ: Արմէն Աւանէսեանի դատավարութեան լուրը մենք ստացանք Ատրպեյճանի ձայնասփիւռէն:

Յաջորդ դիակը որ դուրս բերուած է Պաքուի բանտերէն, Ռոլանտ Պետրոսի Գանիէյեանի'ն է, ծնեալ 1942ին, որուն անուն - մականունը մեզ ունեցած ցուցակներէն ոչ մէկուն մէջ գոյութիւն ունի: Իսկ այդպիսի բազմաթիւ անձանօր անձեր կը գտնուին այնտեղ:

Մեր յանձնախումբը խորապէս մտահոգուած է եւ հանդէս եկած յայտարարութեամբ՝ ուղղուած միջազգային կազմակերպութիւններուն, որպէսզի երբան եւ ստուգեն,

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑ  
103 - ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ  
Տ Օ Ն Ա Կ Ա Տ Ա Ր ՈՒ Թ Ի Ի

կազմակերպութեամբ  
Հ. Յ. Գ. Աթլէյնի. Գիւրգիսի ԵՒ ԳՈՒԳՆԻՆՈՅ  
Տեղի կ'ունենայ շաբաթ 11 դեկտեմբեր 1992  
6:50ին, Նէա Զմիռնիի «ԷՍԹԻԱ» սրահէն ներս:  
Կը նախագահէ ընկեր ՎԱՀԱՆ ՊՉՏԻ  
Կը բանախօսէ Հայաստանէն յատկապէս Իրա  
նոյի անդամ՝

ընկեր ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ

- Ուլտրայի խօսք՝ Հ. Յ. Գ. երկու միութեան
- Կը մասնակցի Համազգայինի «Յակոբ Փափազ

խմբավարութեամբ պրն. ՄԿՐՏԻԶ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ  
■ Սահիկներու ցուցադրութիւն՝ նուիրուած Հ. Յ. Գ.  
մութեան:  
Հայրենակից,  
Եկուր միանարար տանելու մեր մեծ ընտանիքին  
Եկուր միանարար վերանորոգելու մեր սրահը  
Հ. Յ. Գ. Աթլէյնի - Ֆիֆսի

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է  
"ԱԶԱՏ ՕՐ"Ի  
1994Ի  
ՕՐԱՑՈՅՑԸ  
Գին՝ 1500 տրախմի

### Գիւղերու ձամբաները փակուած

Առատ ձիւնի հետեւանքով փակուած են Թալիսի շրջանի գիւղերու ձամբաները, եւ փոխադրամիջոցներու չգոյութեան պատճառով դժուարացած հետիոտն երթելուփութիւնը դարձած է գրեթէ անհնար: ձամբաներու շինարարութեան վարչութեան պետ պրն. Մկրտչեան տեղեկացուց, որ գիւղերու ձամբաները մաքրելու ուղղութեամբ լուրջ բարդութիւններ գոյութիւն ունին:

\*\*\*

### Ապրանքներու ներածումը կը նուազի

Ապրանքներու Հայաստան ներածումը կրճատուած է 30%ով: Այս մասին յայտարարած է դրամի շրջանառութեան կարգաւորման պետական յանձնախումբի նախագահ Տիգրան Սարգսեան: Ըստ իրեն, ներածման կրճատումը սկսած է տակաւին դրամի փոխանակութեան անաչ եւ բոլորովին ալ այդ գործընթացի հետեւանքը չէ, ինչպէս կը փորձէ պնդել կառավարութիւնը:

Տ. Սարգսեանի կարծիքով, ներածումներու նուազման պատճառ դարձած են կառավարութեան կողմէ ընդունուած երկու որոշումները պարտադիր վաճառքի նորմեր սահմանելու մասին:

\*\*\*

### «Զմեռ 93»ը Սիսիանի Մէջ

«Զմեռ 93»ը գործադրութեան դրուեցաւ Սիսիանի մէջ: Ինչպէս խոստացած էին շրջանային եւ տարածային խորհուրդները, չեռուցման շրջանը սկսաւ դեկտեմբեր 1ին: Առաջին գործարկուողը եղաւ ֆաղափ քիւ 1 կաքսայատուը: Մտահոգութեան առարկայ է, որ 2500 քուն մագուրի փոխարէն շրջան ներածուած է 1300 քուն: Մնացեալը, ըստ շրջանի

եւ մեր ցուցակներուն մէջ եղած ու մահուան դատապարտուած դարաբաղցիները՝ Հրաչիկ Պետրոսեանը, Գագիկ Յարութիւնեանը, Գագիկ Ասմարեանը, Արթուր Հայրիտանը փոխադրեն չէգոք գօտի կամ հնարաւոր դարձնեն անոնց բաւական բոլոր կազմակերպութիւնները կը միջնորդեն, փրկելու համար մահուան դատապարտուած հայորդիներու կեանքը: